Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.20 11:16:09 AMST

Թեմատիկ պլանավորում

Հայոց լեզու- 10-րդ դասարան

Տարեկան՝ 68 ժամ

Շաբաթական՝ 2 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Եզեկյան Լ.,Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., տարեթիվ՝ 2022

Պատասխանատու՝ ԿԶՆԱԿ-ի ուսումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ Գայանե Մկրտչյան

Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Հայոց լեզվի պատմությունից	Հայոց լեզվի ծագման, նրա պատմական զարգացման ընթացքի իմացություն	Կարողանա - օգտվել հանրագիտարանից և համացանցից լեզուների ցեղակցության և հայոց լեզվի ծագման մասին տեղեկություններ ստանալու համար
Ժամ	**Էջ**	**Թեմա**
1/1	3-7	Հայոց լեզվի պատմությունից. Լեզուների ցեղակցությունը
1/2	8-9	Հայերենի զարգացման փուլերը
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Ժամանակակից հայերենի կառուցվածքը	-խորացնել լեզվական համակարգի ըմբռնումը՝ լեզվի միավորների փոխկապակցվածության և խոսքում նրանց կատարած դերի գիտակցումը	Կարողանա - բացատրել հայոց լեզվի կառուցվածքը, նրա հիմնական միավորները (հնչյուն, բառ, նախադասություն, տեքստ)
2/1	10-14	Ժամանակակից հայերենի կառուցվածքը
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Ուղղագրություն	- ամրապնդել, համակարգել և խորացնել հայերենի հնչյունների ուղղագրության իմացությունը	Կարողանա՝ - կատարել թեստային աշխատանք ձայնավորների և երկհնչյունների շեշտափոխական հնչյունափոխության, լծորդ հնչյունների ուղղագրության վերաբերյալ - բացատրել շատ բառերի ուղղագրությունը բառերի ստուգաբանության ճանապարհով - կատարել թեստային աշխատանք ածանցավոր և բարդ բառերի (գծիկով, անջատ, միասին) գրության

		շուրջ
3/1	23	Ձայնավորների ուղղագրությունը. Է-ե
3/2	23	Ձայնավորնորի ուղղագրությունը.Օ-ո
3/3	24	Ձայնավորների ուղղագրությունը.Ը
3/4	28	Երկհնչյունների ուղղագրությունը
3/5	29	Յ ձայնակապի ուղղագրությունը
3/6		**Թեմատիկ գրավոր աշխատանք 1**
3/7	32-34	Բաղաձայնների ուղղագրությունը
3/8	35-37	Բաղաձայնների ուղղագրությունը
3/9	38-40	Բաղաձայնների ուղղագրությունը
3/10	41-42	Բաղաձայնների ուղղագրությունը
3/11	43-44	Բաղաձայնների ուղղագրությունը
3/12	45	Եվ/և/- ի ուղղագրությունը
3/13	46-49	Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը
3/14	46-49	Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը
3/15	49-51	Մյուս բաղաձայնների ուղղագրությունը
3/16	49-51	Մյուս բաղաձայնների ուղղագրությունը
3/17	49-51	Մյուս բաղաձայնների ուղղագրությունը
3/18	52-54	Բաղադրյալ բառերի ուղղագրությունը
3/19	52-54	Բաղադրյալ բառերի ուղղագրությունը
3/20		**Թեմատիկ գրավոր աշխատանք 2**
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Բառագիտություն	-հարստացնել սովորողների բառապաշարը, ծանոթացնել բառապաշարի ոճական առանձնահատկություններին -հարստացնել խոսքը տարբեր ոճերում, սովորեցնել տարբերակել բառաշերտերը	Կարողանա -կատարել աշխատանք տեքստի վրա հոմանիշների, հականիշների, համանունների շուրջ -որոշել տեքստում հանդիպող բնիկ և փոխառյալ բառերը բառարանների օգնությամբ -պատմավեպերից առանձնացնել հնաբանություններ
4/1	59-61	Բառապաշար
4/2	61-67	Փոխառություններ
4/3	61-67	Փոխառություններ. բառապատճենումներ
4/4		Կրկնություն

4/5		
4/6	68-75	Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. հոմանիշ բառեր
4/7	70-75	Հոմանիշ բառեր
4/8	75-77	Հականիշ բառեր
4/9	77-81	Համանուն բառեր
4/10	77-81	Համանուն բառեր
4/11	81-85	Հարանուն բառեր
4/12	81-85	Հարանուն բառեր
4/13	85-87	Մենիմաստ և բազմիմաստ բառեր
4/14	87-91	Հայերենի բառապաշարն ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշների. հնաբանություններ և նորաբանություններ
4/15	87-91	Հնաբանություններ և նորաբանություններ
4/16	91-94	Նորաբանություններ. հեղինակային նորաբանություններ
5/1		**Թեմատիկ գրավոր աշխատանք 3**
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Բառակազմություն	-հարստացնել սովորողների բառապաշարը՝ օգտվելով հայերենի բառակազմության եղանակներից	Կարողանա՝ -բառերը ենթարկել բառակազմական վերլուծության, թեստային վարժություններ կատարել բառակազմության շուրջ -կատարել թեստային աշխատանք ածանցավոր և բարդ բառերի (գծիկով, անջատ և միասին) գրության վերաբերյալ -տրված արմատները կիրառել ածանցավոր, բարդ, բարդածանցավոր բառեր կազմելու համար -տրված ածանցներով նոր բառեր կազմել, առանձնացնել բարդ, ածանցավոր, բարդածանցավոր բառերը -գրի առնել նորաստեղծ հապավումներ
6/1	99-105	Բառակազմություն
6/2	99-105	Ածանցումը որպես բառակազմության եղանակ
6/3	105-107	Բառաբարդումը որպես բառակազմության եղանակ
6/4	105-107	Բառաբարդումը որպես բառակազմության եղանակ
6/5	108-109	Կրկնությունը որպես բառակազմության եղանակ
6/6	108-109	Կրկնությունը որպես բառակազմության եղանակ
6/7	109-111	Հարադրումը որպես բառակազմության եղանակ

6/8	109-111	Հարադրումը որպես բառակազմության եղանակ
6/9	111-113	Հապավումը որպես բառակազմության եղանակ
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Բառարանագրություն	-ամրապնդել բառարանից օգտվելու սովորությունը	Կարողանա -տարբերակել բառարաններն իրարից -գտնել տրված բառերի մասին համապատասխան տեղեկություններ՝ օգտագործելով բառարաններ
7/1	116	Բառարանագրություն.բառարանների տեսակները
2/2	116-117	Բառարանների կառուցվածքը և նրանցից օգտվելու կանոնները: Հայերենի նշանավոր բառարանները
9/1		**Թեմատիկ գրավոր աշխատանք 4**
Թեման	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Տեքստի կառուցվածքը	-ամրապնդել տեքստի կառուցվածի մասին ունեցած գիտելիքները -ավելի ընդհանրացված գիտելիքներ ունենալ լրատվական ժանրերի մասին -իմանալ գործնական գրությունների հիմնական տեսակները, առանձնա-հատկությունները և կառուցվածքը -հասկանալ գործնական գրությունների դերը գործնական հարաբերություններում	Կարողանա -վերլուծել մամուլի լեզուն (նորաբանություններ և դիպվածային արտահայտություններ) -կազմել ոչ ծավալուն տեքստեր, վերնագրել, ըստ անհրաժեշտության ավելացնել ցանկեր -տարբերակել լրագրական ժանրերը, ըստ անհրաժեշտության գրել այդ ժանրերով փոքրածավալ տեքստեր -ըստ անհրաժեշտության ճանաչել և կազմել գործնական գրություններ
9/1	122-123	Տեքստի կառուցվածքը
9/2	123-128	Վերնագիր և բնաբան
9/3	128-130	Առաջաբան, ներածություն և վերջաբան
9/4	130-132	Պարբերություն
9/5	132-135	Ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ
9/6	135-139	Տեղեկատվական ժանրեր: Ակնարկ: Թղթակցություն
9/7	140-145	Ռեպորտաժ: Հարցազրույց
9/8	145-140	Գործնական գրություններ. Դիմում: Ինքնակենսագրություն
9/9	150-156	Պաշտոնական նամակ: Բացատրագիր

9/10	156-159	Բնութագիր: Տեղեկանք
9/11	159-163	Արձանագրություն: Քաղվածք
10/1		**Ամրակայող վարժ •**

Դաս 1. Հայոց լեզվի պատմությունից. Լեզուների ցեղակցությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են լեզվաընտանիքները:

2. Հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ ո՞ր ժողովուրդների լեզուներն են ընդգրկված:

3. Ի՞նչ տեղ է գրավում հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Աշխարհի լեզուներն ըստ ծագման խմբավորվում են որոշակի լեզվաընտանիքներում, այսինքն՝ ունեն ծագումնաբանական ընդհանրություն:

2. Հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ ընդգրկված են Հնդկաստանից մինչև Եվրոպայի ծայր հյուսիս-արևմուտքը սփռված ժողովուրդների լեզուները:

3. Հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ ինքնուրույն լեզվաճյուղ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ լեզուները ըստ ծագման խմբավորվում են որոշակի լեզվաընտանիքներում, ունեն ծագումնաբանական ընդհանրություններ, թվարկել մի քանի լեզվաընտանիք, ինչպես՝ հնդեվրոպական, չին-տիբեթական և այլն:

2. Բացատրել, որ հնդեվրոպական լեզվաընտանիքը ընդգրկում է Հնդկաստանից մինչև Եվրոպայի ծայր հյուսիս-արևմուտք ընկած ժողովուրդների լեզուները, ինչպես՝ հնդկերենը, իրաներենը ռուսերենը, անգլերենը և այլն:

3. Նշել, որ հայերենը ևս հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին լեզվաճյուղ է:

Դաս 2. Հայոց լեզվի պատմությունից. Հայերենի զարգացման փուլերը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Երբվանի՞ց են սկսվում մեր բուն գիտելիքները հայերենի մասին։

2. Հայոց լեզվի զարգացման ի՞նչ շրջաններ են առանձնացվում գրերի գյուտից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը։

3. Ի՞նչ այլ անվանումներ ունեն հայոց լեզվի զարգացման երեք շրջանները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Հայերենի մասին բուն գիտելիքներն սկսվում են 5-րդ դարից, երբ Մեսրոպ Մաշտոցը 405 թ. ստեղծեց հայոց այբուբենը, և հայերենը դարձավ գրային լեզու։

2. Գրերի գյուտից մինչև մեր օրերն ընդունված է առանձնացնել հայոց լեզվի զարգացման երեք շրջան.

ա. հին հայերենի,

բ. միջին հայերենի,

գ. նոր հայերենի՝ իր երկու ճյուղերով՝ արևելահայերեն և արևմտահայերեն։

3. Հայոց լեզվի զարգացման շրջաններն այլ կերպ անվանում ենք գրաբարի, կիլիկյան հայերենի և աշխարհաբարի շրջաններ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել, որ հայերենի մասին բուն գիտելիքներն սկսվում են հայոց գրերի գյուտից հետո, երբ հայերենը, դառնալով գրային լեզու, ամրագրվեց գրավոր հուշարձաններում և ավանդվեց հետագա սերունդներին։

2. Թվարկել, որ հայերենը անցել է զարգացման երեք շրջան՝ հին հայերենի, միջին հայերենի և նոր հայերենի։

3. Ասել և բացատրել նաև նրանց այլ անվանումները.

- հին հայերեն՝ գրաբար,

- միջին հայերեն՝ կիլիկյան հայերեն,
- նոր հայերեն՝ աշխարհաբար՝ իր երկու ճյուղերով։

Դաս 3. Ժամանակակից հայերենի կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս են մարդիկ հիմնականում մտածում և հաղորդակցվում։

2. Ի՞նչ է հնչյունը։

3. Ի՞նչ է բառը։

4. Ի՞նչ են նախադասությունը և տեքստը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Լեզուն մարդկանց հաղորդակցման հիմնական միջոցն է։ Այն ամենը, ինչի մասին մտածում, տեսնում, զգում են մարդիկ, արտահայտում են լեզվի միջոցով։

2. Հնչյունը լեզվի ձայնային նվազագույն միավորն է, որը միայնակ կամ այլ հնչյունների հետ կազմում է բառ։

3. Բառը հնչյուն կամ հնչյունախումբ է, որն արտահայտում է իմաստ և ինքնուրույնաբար գործածվում է խոսքում։

4. Նախադասությունը բառ է կամ բառերի կապակցություն, որն արտահայտում է ամփոփ միտք, իսկ նախադասությունների միավորումից կազմվում է տեքստ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել, որ մարդիկ հիմնականում հաղորդակցվում են լեզվի միջոցով, մտածում են լեզվի միջոցով, առանց լեզվի մարդը չի կարող մտածել։

2. Հնչյուններն առանձնացնել բառում, կապակցելով հնչյունները՝ բառեր կազմել։

3. Տրված հնչյուններով տարբեր բառեր կազմել, հասկանալ, որ յուրաքանչյուր բառ կազմված է հնչյունից կամ հնչյունախմբից։

4. Տրված բառերով նախադասություններ կազմել։ Տրված նախադասությունները վերադասավորելով՝ ստանալ տրամաբանորեն ամբողջական տեքստ։

Դաս 1. Ձայնավորների ուղղագրությունը՝ է-ե Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դեպքում է **է** հնչյունը բառամիջում և բառավերջում հիմնականում գրվում **է** տառով:

2. Բառասկզբում **ե** տառը ե՞րբ է գրվում:

3. Շեշտափոխական հնչյունափոխության հետևանքով բառակազմության ժամանակ ո՞ր տառն է գրվում **ե:**

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. **Է** հնչյունը բառամիջում և բառավերջում **է** տառով գրվում է այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ է:

2. Բառասկզբում գրվում է **ե** տառը, երբ արտասանվում է **յէ**: Այս կանոնից շեղվում են օժանդակ բայի **եմ, ես, ենք, եք, են** ձևերը, որտեղ գրվում է **ե** տառը, բայց արտասանվում է **է** հնչյունը:

3. Ըստ շեշտափոխական հնչյունափոխության կանոնների՝ բառակազմության ժամանակ **յա-ն** դառնում է **ե:**

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բառերը բաժանել ըստ բաղադրիչների, տարբերակել **է** հնչյունով սկսվող արմատները և ըստ անհրաժեշտության գրել **է** կամ **ե** /էլեկտրաէներգիա- էլեկտրա+էներգիա, վայրէջք-վայր+էջ/իջնել/, լայնէկրան-լայն+էկրան, մանրէ-մանր+է/:

2. Առանձնացնել **յէ** և **է** արտասանվող բառերը (ելակ, երբ, երեկո, երկաթ, եմ, ես, ենք, եք, են) :

3. Բառերը բաժանել բաղադրիչների և գրել բաց թողնված տառը՝ գործուն-ություն, մատ-նադարան, քրիստոն-ություն:

Դաս 2. Ձայնավորների ուղղագրությունը՝ օ-ո Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դեպքում է **օ** հնչյունը բառամիջում և բառավերջում հիմնականում գրվում **օ**:

2. Ո՞ր դեպքում է բառասկզբում **օ** արտասանվում, բայց գրվում **ո**, իսկ բառամիջում արասանվող **վօ**-ն գրվում **վո**:

3. Ո՞ր դեպքում է բառասկզբում լսվում և գրվում **վո**:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. **Օ** հնչյունը բառամիջում և բառավերջում հիմնականում գրվում **օ** այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ է:

2. *Ով, ովքեր* բառերի բառասկզբի **ո**-ն կարդացվում է **օ**, իսկ բառամիջում արասանվող **վօ**-ն գրվում է **վո** /*բանվոր, զինվոր/:*

3. Բառասկզբում **վո** լսվում և գրվում է այլ լեզուներից անցած բառերում /*վոլտ, Վոլգա* և այլն/:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բառերը բաժանել ըստ բաղադրիչների, տարբերակել **օ** տառով սկսվող արմատները և ըստ անհրաժեշտության գրել **օ** կամ **ո** / *կեսօր-կես-օր, ամենօրյա-ամեն-օր-յա, ազգօգուտ-ազգ-օգուտ, եղբորորդի- եղբոր-որդի*/:

2. Տարբերակել և ճիշտ գրել բառասկզբում և բառամիջում **վօ** արտասանվող բառերը:

Բառասկիզբ	Բառամեջ
ոզնի ոսկոր որկոր որակ որդի	բանվոր զինվոր գրավոր աշխատավոր

3. Տարբերակել և ճիշտ գրել այլ լեզուներից անցած բառերը /*վոլեյբոլ, Վոլոդյա, վոլտ, Վորոնեժ* և այլն/:

Դաս 3. Ձայնավորների ուղղագրությունը՝ Ը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դեպքում է բառասկզբում գրվում ը ձայնավորը:
2. Ո՞ր դեպքում է բառամիջում գրվում ը ձայնավորը:
3. Ո՞ր դեպքում է բառավերջում գրվում ը ձայնավորը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ը ձայնավորը բառասկզբում գրվում է ***ղ, մ, ն*** բաղաձայններից առաջ:

2. Բառամիջում գրվում է ը, եթե արմատի սկզբնատառ է:

3. Բառավերջում գրվում է ը, եթե լսվում է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված բառերում ըստ անհրաժեշտության բաց թողնված տեղերում գրել ը տառը՝ -սկիզբ, -ղձալի, -շտապել, -մպանակ, -սպասել, -նթացք:

2. Տրված բառերում ըստ անհրաժեշտության բաց թողնված տեղերում գրել ը տառը՝ արագ-նթաց, դաս-նկեր, ան-նդունակ, նոր-նտիր:

3. Տրված բառերում ըստ անհրաժեշտության գրել ը տառը՝ սառ-, ին-, տաս-, դառ-, գիրք-:

Դաս 4. Երկհնչյունների ուղղագրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են երկհնչյունները, և ո՞ր երկհնչյունների գրության և արտասանության միջև կա տարբերություն:
2. Ի՞նչ տարբերություն կա **յո** երկհնչյունի գրության և արտասանության միջև:
3. Ի՞նչ տարբերություն կա **յա** երկհնչյունի գրության և արտասանության միջև:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Երկհնչյունները որևէ ձայնավորի և յ-ի միասնությամբ կազմված կապակցություններն են (այ, յա, եյ, ոյ, յո և այլն)։ Որոշ տարբերություններ կան միայն **յո** և **յա** երկհնչյունների գրության և արտասանության միջև:
1. **Յո** երկհնչյունը գրվում է **եո** (ամեոբա, լեգեոն) և **իո** (բրաբիոն, ամբիոն):
2. **Յա** երկհնչյունը գրվում է **իա** (կրիա, օվկիանոս) և **եա** (իդեալ, հրեա):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել ժամանակակից հայերենի երկհնչյունները և լրացնել բաց թողնված տեղերում՝ եղբ-ր, մատ-ն, թ-, համբ-ր, ս-նակ, Ն-, արքա-ղդի, կա-ն:
2. Տարբերակել **յո** երկհնչյունի արտասանությունը տարբեր բառերում և լրացնել բաց թողնված տեղերում՝ օր-ղդ, միլ-ն, լեգ-ն, ռադ-:
3. Տարբերակել **յա** երկհնչյունի արտահայտությունը տարբեր բառերում և լրացնել բաց թողնված տեղերում՝ կր-, Անգլ-, քվ-տուփ, հեք-թ, միլ-ղդ, քր-կան, օվկ-նոս, քիմ-, էքսկուրս-, բամ-, քրիստոն-կան:

Դաս 5. Յ ձայնակապի ուղղագրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր ձայնավորներից հետո է գրվում յ ձայնակապը:
2. Ո՞ր ձայնավորներից հետո չի գրվում յ ձայնակապը:
3. Ո՞րն է ձայնակապից տարբերվող արմատական յ-ի գրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Յ ձայնակապը գրվում է միայն **ա** և **ո** ձայնավորներից հետո, երբ նրանց հաջորդում է ձայնավոր (արքայի, երեկոյան):
2. Յ ձայնակապը չի գրվում **է (ե), ի, ու** ձայնավորներից հետո (բերեին, միասին, հարսնացուի):
3. Ձայնակապի հետ չի կարելի շփոթել մի շարք բառերի արմատական **յ-ն**, ինչպես՝ բայ-բայական, թեյ- թեյաման, հայ- հայերեն, Անդրեյ- Անդրեյի և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բաց թողնված տեղերում ըստ անհրաժեշտության լրացնել յ տառը՝ տղա-ի, մնա-ուն, Միքա-ել, Կարո-ի, խնա-ել, նո-եմբեր:
2. Բաց թողնված տեղերում ըստ անհրաժեշտության լրացնել յ տառը՝ Գայանե-ի, մի-ասին, մի-ություն, անէ-ական, ժողովածու-ի:
3. Բաց թողնված տեղերում ըստ անհրաժեշտության լրացնել յ տառը՝ թե-ել, հոկե-ի, Սերգե-ի, խո-ահարել:

Դաս 6. Բաղաձայնների ուղղագրությունը. Բ-պ-փ (բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող թեմատիկ պլանավորումները կառուցվում են նույն սկզբունքով)

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դեպքում են **բ-ի** գրությունն ու արտասանությունը տարբեր:
2. Ո՞ր բառերում է **խպ** հնչյունակապակցությունը գրվում **ղբ**:
3. Ո՞ր դեպքում է արտասանվում և գրվում **փ**:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում ր-ից, մ-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է **փ**, սակայն գրվում է **բ**:
2. **Աղբ, աղբյուր, եղբայր, ողբ** և նրանցից կազմված բառերում գրվող **ղբ**-ն արտասանվում է **խպ**:
3. Որոշ դեպքերում ր-ից հետո արտասանվող **փ** հնչյունը գրվում է **փ** տառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բաց թողնված տեղերում լրացնել **բ** տառը՝ դար-ին, ա-խազ, եր-եք, լիր-, Սերո-, շա-աթ, սուր-բ, սր-ել. ուր-աթ և այլն:
2. Բաց թողնված տեղերում լրացնել **ղբ** տառերը՝ ա-ատար, ե-այրական, ցայտա-յուր, ռ-ասաց, ռ-բերգակ, ա-ակույտ և այլն:
3. Բաց թողնված տեղերում լրացնել կա՛մ **բ,** կա՛մ **փ** տառը՝ Ար-իար, եր-ներանգ, եր-եմն, փր-րել, թար-, դար-նոց նր-ագեղ, ար-ենի և այլն:

Դաս 7. Բաղաձայնների ուղղագրությունը. Կրկնակ բաղաձայնների ուղղագրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչի՞ հետևանքով է բառերում այս կան այն բաղաձայնը գրվում կրկնատառ։
2. Հիմնականում ո՞ր արմատներն ու դրանցից կազմված բառերն ունեն կրկնակ բաղաձայններ (նշել երկու օրինաչափություն)։
3. Ո՞ր դեպքում են բառերում առաջ գալիս կրկնակ բաղաձայններ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մի շարք բառերում այս կամ այն բաղաձայնը արտասանվում է տևական, որի հետևանքով դրանք գրվում են կրկնատառ։
2. Կրկնակ բաղաձայն հիմնականում ունեն մի շարք արմատներ ու նրանցից կազմված բառեր՝ անդորր, բալլադ, բերրի, Էմմա, կեցցե, մրրիկ, տարր, տոննա, Ռաֆֆի և այլն։
3. Կրկնակ բաղաձայններ լինում են.

ա. բնաձայնական բառերում,

բ. բաղադրյալ բառերում և այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել, որ այս կամ այն բաղաձայնի կրկնակ արտասանվելու արդյունքում բառում տվյալ բաղաձայնը գրվում է կրկնատառ։
2. Բաց թողնված տեղերում լրացնել կրկնակ բաղաձայններ, օրինակ՝ տա-ական, բե-ություն, անդո-ավետ, մ-կաշունչ, ֆի-ական, տո-ա և այլն։
3. Բաց թողնված տեղերում լրացնել կա՛մ **կրկնակ,** կա՛մ **մեկ բաղաձայն**, օրինակ՝ ի-ական, երե-րբիչ, ե-որդ, հինգ-որդ, զ-ել, ք-ական, բաղաձայ-եր, մանրազ-ին, պ-ահողմ, հետաք-ին, բնօ-ան և այլն։

Դաս 8. Բաղադրյալ բառերի ուղղագրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դեպքերում են բաղադրյալ բառերի բաղադրիչները գրվում անջատ (նշել երկու կանոն)։
2. Ո՞ր դեպքերում են բաղադրյալ բառերի բաղադրիչները գրվում գծիկով (նշել երկու կանոն)։
3. Ո՞ր դեպքերում են բաղադրյալ բառերի բաղադրիչները գրվում միասին (նշել երկու կանոն)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հիմնականում անջատ են գրվում **առ**-ով կազմված կրկնավոր բարդությունները, որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ գտնվող բաղադրյալ բառերը, բաղադրիչներից մեկի հոլովված լինելու դեպքում և այլն։
2. Հիմնականում գծիկով են գրվում կրկնավոր բարդությունները, միմյանց նկատմամբ հոմանշային, հականշային, առնչակից հարաբերություն ունեցող բաղադրիչներից կազմված բարդությունները, **տեր, մելիք, բեկ, միրզա** և նման բաղադրիչներով կազմված ազգանունները և այլն։
3. Հիմնականում միասին են գրվում հոդակապով միացած բաղադրիչները, **ըստ, ց, զ** բաղադրիչով կրկնավոր բաղադրյալ բառերը, բառասկզբի **ընդ, ց, զ** բաղադրիչները և այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված բաղադրյալ բառերը գրել անջատ. օրինակ՝ մուգ կանաչ, ծովից ծով, դեմ դիմաց, գյուղից գյուղ, ի հեճուկս, առ այսօր, արքայից արքա, երկու երրորդ և այլն։
2. Տրված բաղադրյալ բառերը գրել գծիկով, օրինակ՝ յոթ-ութ, հատիկ-հատիկ, դափ-դատարկ, հեռու-մոտիկ, երեկ-այսօր, հյուսիս-արևմուտք, փոքր-ինչ, գոռում-գոչյուն, տուն-թանգարան, շատ-քիչ, լեփ-լեցուն և այլն։
3. Տրված բաղադրյալ բառերը գրել

ա. կա՛մ **միասին,** կա՛մ **գծիկով,** կա՛մ **անջատ.** օրինակ՝ հինգ (վեցերորդ), տասը(քսան), փոքրից(մեծ), ի(գիտություն), մեծ(ու)փոքր, հյուսիս(արևմտյան), առ(նվազն), ծիլ(ծաղիկ), հլու(հնազանդ), պատե(պատ) և այլն։

բ. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին.

ա.հայ (հունական), իննսուն(ութ), հարյուր (մեկ), գինե (տուն)

բ. ձեռք (սեղմում), հարավ (արևելյան), դափնե (պսակ), քսան (ութ)

գ. աշխարհե(աշխարհ), հանդ (ու) արտ, ռազմա(քաղաքական), ափե (ափ)

դ. շին (վարչություն), մեր (օրյա), խառն(ի) խուռն, տասը(քսան)

Դաս 1. Բառագիտություն. Բառապաշար. Փոխառություններ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է ուսումնասիրում բառագիտությունը։

2. Ի՞նչ է կոչվում լեզվի բառերի ամբողջությունը։

3. Ի՞նչ ճանապարհներով է հարստանում լեզվի բառապաշարը։

4. Ի՞նչ են փոխառությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է բառերի ծագումը, ձևը, իմաստը, կառուցվածքը և այլն։

2. Ամեն մի լեզու ունի իր բառերի ամբողջությունը, որն էլ կոչվում է բառապաշար։

3. Բառապաշարը քարացած չէ և ժամանակի ընթացքում ենթարկվում է փոփոխությունների երկու ճանապարհով՝

- լեզվում եղած արմատներով ու ածանցներով նոր բառեր են կազմվում,
- օտար լեզուներից նոր բառեր են փոխառվում։

4. Փոխառությունները մի լեզվից մեկ այլ լեզվին անցած բառերն են, որոնք հարստացնում են տվյալ լեզուն հիմնականում նոր իրողությունները անվանող բառերով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ բառերի ծագմամբ, ձևով, կառուցվածքով, իմաստով զբաղվում է լեզվաբանության առանձին բաժինը՝ բառագիտությունը։

2. Բացատրել, որ յուրաքանչյուր լեզվի բառերի ամբողջությունը կոչվում է բառապաշար։

3. Մեկնաբանել, որ բառապաշարը քարացած չէ. այն ենթարկվում է փոփոխությունների։ Այդ փոփոխությունները երկու ձևով են կատարվում՝

- լեզվի ներքին միջոցներով, օրինակ՝ կայքէջ, սահիկաշար, վահանակ, հիշասարք և այլն,
- օգնության են գալիս օտար լեզուները, որոնցից կարող են նոր բառեր փոխառվել, օրինակ՝ ալգորիթմ, մաթեմատիկա, ֆիզիկա, պլան, կապիտալիզմ, պրոֆեսոր, դեկան և այլն։

4. Բացատրել, որ փոխառությունները այլ լեզուներից անհրաժեշտ բառերի փոխառումն է, դա անընդհատ գործընթաց է, բերել փոխառյալ բառերի հայտնի և պարզ 1-2 օրինակ՝ նշելով փոխատու լեզուն.

Պարսկերենից՝ աշխարհ, նախարար, արև, նիզակ, մազ, հեր և այլն։

Հունարենից՝ կանոն, ակադեմիա, գավաթ, երգեհոն, կիթառ և այլն։

Դաս 2. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. Հոմանիշ բառեր

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են բառային հոմանիշները։

2. Ի՞նչ են հոմանշային շարքերը։

3. Ո՞ր խոսքի մասերով են առավելապես կազմվում հոմանշային շարքեր (նշել երկու խոսքի մաս)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Բառային հոմանիշները միևնույն խոսքի մասին պատկանող բառեր են, որոնց իմաստները լիովին կամ մասնակիորեն համընկնում են։

2. Իրար հոմանիշ բառերը միասին կազմում եմ հոմանշային շարք։ Այդ շարքերում ընդգրկված բառերը հիմնականում արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են իմաստային նրբերանգներով։

3. Հոմանշային շարքեր առավելապես կազմում են գոյականները, ածականները, բայերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ բառային միևնույն խոսքի մասին պատկանող բառերը, որոնց իմաստները լիովին կամ մասնակիորեն համընկնում են, կոչվում են հոմանիշներ։

2. Կազմել տրված բառերի հոմանշային շարքեր՝ ընդգրկելով հիմնական բառի 2-3 հոմանիշ։ Օրինակ՝ գեղեցիկ- սիրուն- հրապուրիչ- չքնաղ// մաքուր- անաղարտ- ջինջ- անբասիր։

3. Կազմել գոյականներով, ածականներով և բայերով կազմված հոմանշային 2-3 շարք։

Գոյականներով՝ շող-ճառագայթ-ճաճանչ, մազ-հեր-վարս-ծամ, վախ- երկյուղ-սարսափ։

Ածականներով՝ տխուր-տրտում-թախծոտ-անտրամադիր, հարուստ-ունևոր-մեծատուն, ագահ-ընչաքաղց-ժլատ-աչքածակ և այլն։

Բայերով՝ գողանալ-կողոպտել-առևանգել, հորինել- ստեղծել- կազմել-երկնել, կռվել- մարտնչել-մենամարտել և այլն։

Դաս 3. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. Հականիշ բառեր

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են հականիշները:

2. Ըստ կազմության՝ ի՞նչ տեսակի հականիշներ կան:

3. Ո՞ր խոսքի մասերով են առավելապես կազմվում հականիշներ (նշել երկու խոսքի մաս):

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Հականիշները իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն են:

2. Կազմության առումով հականիշները լինում են նույնարմատ և տարարմատ:

3. Հականիշներ առավելապես կազմվում են գոյականներից, ածականներից, բայերից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ հականիշները ցույց են տալիս բառերի հակադիր իմաստներ, օրինակ՝ մեծ-փոքր, ուրախ-տխուր, երջանիկ-ապերջանիկ, գիշեր-ցերեկ և այլն:

2. Բերել նույնարմատ և տարարմատ հականիշների 2-3 օրինակ:

Նույնարմատ՝ երջանիկ-ապերջանիկ, բախտավոր-դժբախտ, կայունացնել-ապակայունացնել, աղմկոտ-անաղմուկ և այլն:

Տարարմատ՝ սկիզբ-վերջ, քնել-արթնանալ, մոտենալ-հեռանալ, տխուր-ուրախ և այլն:

3. Բերել հականիշների 2-3 օրինակ՝ արտահայտված գոյականներով, ածականներով և բայերով:

Գոյականներով՝ գիշեր-ցերեկ, սկիզբ-վերջ,ապացուցում- հերքում և այլն:

Ածականներով՝ տխուր-ուրախ, վախկոտ-քաջ, հին-նոր, վեհ-ստոր և այլն

Բայերով՝ օգնել-խանգարել, սիրել-ատել, ստեղծել-ավերել, հիշել-մոռանալ և այլն:

Յուրաքանչյուր շարքում գտնել տողասկզբում գրված բառի հականիշը:

Շտապել- փութալ, աճապարել, դանդաղել:

Բերրի- բերքառատ, բերքաշատ, անջրդի, փթթուն:

Խելացի- խելամիտ, շրջահայաց, լայնախոհ, կարճամիտ։

Դաս 4. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. Համանուն բառեր

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որո՞նք են համանուն բառերը։

2. Որո՞նք են բառային և բառաքերականական համանունները։

3. Որո՞նք են բուն համանունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Համանուն են այն բառերը, որոնք ունեն նույն ձևը, սակայն տարբեր իմաստներ են արտահայտում։

2. Եթե բառերը քերականորեն չփոփոխված, ուղիղ ձևով են կազմում համանունություն, դրանք բառային համանուններ են։

Եթե բառերից մեկը ուղիղ ձև է, իսկ մյուսը՝ քերականորեն փոխված բառաձև, ապա այդպիսի համանունները կոչվում են բառաքերականական։

3. Բուն են նույն ձևով գրվող ու արտասանվող համանունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ համանունները պետք է ունենան նույն ձևը, սակայն արտահայտեն տարբեր իմաստներ, օրինակ՝ բուն-բուն, մարտ-մարտ, բութ-բութ և այլն։

2. Բերել բառային համանունների 2-3 օրինակ. մարտ-մարտ, սեր-սեր, հոտ-հոտ և այլն։

Բերել բառաքերականական համանունների 2-3 օրինակ. անձի-անձի, անցավ-անցավ, արի-արի և այլն։

3. Բերել օրինակներ բուն համանուններով և կազմել նախադասություններ։

Օրինակ՝ բարակ-բարակ, փող-փող, դարման-դարման և այլն։

Որսի ընթացքում մի արագավազ բարակ դես ու դեն էր վազում։

Աղջկա բարակ մատները սահում էին դաշնամուրի ստեղների վրայով։

Դաս 5. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. Հարանուն բառեր

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որո՞նք են հարանուն բառերը։

2. Ինչու՞ են հարանունները տարբեր կիրառություններում առաջացնում իմաստային շփոթ։

3. Հարանունների կազմության ի՞նչ ձևեր կան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Հարանուն են այն բառերը, որոնք հնչյունական կազմով իրար մոտ են կամ նման։

2. Քանի որ հարանունները իրար բավականին նման են, երբեմն էլ մոտ են իրար իրենց արտահայտած իմաստներով, ուստի հաճախ տարբեր կիրառություններում առաջացնում են իմաստային շփոթ։

3. Հարանունների մի մասը իմաստային ոչ մի կապ ու ընդհանրություն չունի։ Դրանք իրար նման են իրենց հնչյունական կազմով։ Հարանունների մի մասն էլ կազմվում է նույն արմատից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ հարանունները հնչյունական կազմով իրար մոտ կամ նման բառերն են։

2. Բերել իմաստային կապ չունեցող հարանունների 2-3 օրինակ. խարամ-խարան, կոհակ-կողակ, սպրդել-սփրթնել և այլն, և նույն արմատից կազմված հարանունների 2-3 օրինակ՝ հրատարակչություն- հրատարակություն, վաղորդայն-վաղորդյան, հնչուն-հնչյուն և այլն։

3. ա) Փակագծերում տրված հարանուններից ընտրել նախադասության մտքին համապատասխանողը (երբ հարանունները կազմված են նույն արմատից)։

ա. Քամու ուժգին (շառաչունը, շառաչյունը) վախեցրեց պատշգամբում հավաքվածներին:

բ. Երգչուհու ձայնը խռպոտել էր, նա երգելուց առաջ (միաժամանակ, միառժամանակ) կանգ առավ, ուժերը հավաքեց և փորձեց երգել:

բ) Փակագծերում տրված հարանուններից ընտրել նախադասության մտքին համապատասխանողը (երբ հարանունները իմաստային կապ չունեն)։

ա. Առանձնատան ընդունարանի առաստաղը զարդարված էր մեծաշուք (աշտարակներով, աշտանակներով):

բ. Աշնանը ամենուր կարելի է տեսնել չորացած տերևների (շեղջեր, շեղբեր):

Դաս 6. Մենիմաստ և բազմիմաստ բառեր [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր բառերն են մենիմաստ։

2. Ո՞ր բառերն են բազմիմաստ։

3. Ի՞նչ նշանակություն ունեն բազմիմաստ բառերը խոսքում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Միայն մեկ իմաստ արտահայտող բառերը մենիմաստ են։

2. Մեկից ավելի իմաստներ արտահայտող բառերը բազմիմաստ են։

3. Բազմիմաստ բառերի միջոցով գեղարվեստական երկերի հեղինակները ոճական զանազան հնարներ են ստեղծում, առավել պատկերավոր դարձնում խոսքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բերել մենիմաստ բառերի 5-6 օրինակ. այսպես՝ մաթեմատիկա, բալենի, տնամերձ, հանցագործություն, բառ, նախադասություն և այլն։

2. Բերել բազմիմաստ բառերի 2 օրինակ, բացատրել դրանց իմաստները. օրինակ՝ սուր(սրածայր կամ թուր)- սուր (հայացք)(լավ տեսողություն, ազդեցիկ հայացք), գիծ(ճակատ, ճակատագիծ)-գիծ

(հետք, հետագիծ)- գիծ (դիմագիծ), գլուխ(մարդու մարմնի մաս)-գլուխ(առարկայի վերին մաս) - գլուխ(առաջամաս, շարքի առաջին մասը) և այլն։

3. Կազմել նախադասություններ տրված բառերի տարբեր իմաստներով՝ *դառը, գիծ, հին։*

Օրինակ՝ Հայրը իրենց օջախի ***գլուխն*** էր։ Զինվորները մարտնչում էին ռազմադաշտի առաջին ***գծում։ Հին*** մտքերը նորից այցելել էին նրան։

Դաս 7,8,9. Հայերենի բառապաշարն ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշների. հնաբանություններ և նորաբանություններ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշների՝ բառապաշարի ի՞նչ շերտեր են առանձնանում։

2. Ի՞նչ են հնաբանությունները։

3. Ի՞նչ են նորաբանությունները։

4. Ինչպե՞ս են առաջանում հեղինակային նորաբանությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Լեզվի գործուն բառաշերտի մեջ են մտնում ամենօրյա գործածության բառերը, իսկ բառապաշարի ոչ գործուն շերտին են պատկանում հազվադեպ գործածվող բառերը, օրինակ՝ հնաբանություններն ու նորաբանությունները։

2. Հնաբանությունները գործածվել են լեզվի զարգացման նախորդ փուլերում և հետագայում տարբեր պատճառներով դուրս են մնացել գործածությունից։

3. Լեզվի մեջ նոր մուտք գործած բառերը կոչվում են նորաբանություններ։

4. Հեղինակային նորաբանությունները հիմնականում ստեղծում են առանձին հեղինակներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել, որ բառերը կարող են բաժանվել ըստ գործուն և ոչ գործուն հատկանիշի։ Բերել բառերի գործուն շերտին պատկանող օրինակներ՝ սեղան, *աթոռ, հայր, մայր, սենյակ, տուն, խոհանոց, ապուր, գնալ, գալ, գենք, զինվոր, հրետանավոր, համալսարան, դպրոց* և այլն։ Բերել բառապաշարի ոչ գործուն շերտին վերաբերող բառերի օրինակներ՝ *օրհներգ, ռազմավարություն, մարտահրավեր, բոլշևիկ, կուլակ, մարզպան, աշտե, տեգ, աշտեակիր, նաժիշտ, մատռվակ, դիրեկտոր, քաղսովետ* և այլն։

2. Բերել հնաբանությունների օրինակներ, դրանցով կազմել նախադասություններ։

Օրինակ՝ *աշտե, նիզակ, մատռվակ, բանբեր, սկահակ, բդեշխ, սենեկապետ, հազարապետ և այլն։*

Զորքի հրամանատարը տեգով խոցեց դեպի իրեն շարժվող թշնամուն։ Նաժիշտները զգուշորեն հարդարում էին թագուհու վարսերը։

4. Բերել նորաբանությունների 3-4 օրինակ, կիրառել նախադասություններում։

Օրինակ՝ *կայքէջ, սահիկաշար, հիշասարք, ծրիչ, կրիչ, արտարժույթ, հիմնադրամ, գործառույթ, ընկճախտ, գնաճ, գնանկում* և այլն։

Ընկճախտի հետևանքով աղջիկը օրեր շարունակ սենյակից դուրս չէր գալիս։

Տնտեսական ճգնաժամի պատճառով երկրում գրանցվել է գնաճ, և արտարժույթի որոշ տեսակներ դրամի համեմատությամբ թանկացել են։

Դաս 10. Բառակազմություն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս են ստեղծվում բառերը։

2. Ի՞նչ բաղադրիչներ ունեն բառերը։

3. Որո՞նք են բառապաշարի հարստացման միջոցները։

4. Որո՞նք են հայերենի բառակազմական եղանակները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Բառերի ստեղծման տարբեր եղանակներ կան. բառի հիմքին ածանցներ ավելացնելով, արմատների միացմամբ և այլն։

2. Բառերը կազմող բաղադրիչները՝ արմատներ, ածանցներ, բառակազմական մասնիկներ։

3. Բառապաշարի հարստացման ուղիները՝ փոխառություններ և բառակազմական ներքին միջոցներով բառերի ստեղծում։

4. Բառակազմական երեք եղանակները՝ ածանցում, բառաբարդում և հապավում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել բառերի ստեղծման ուղիները՝ նշելով, որ բառերը կարող են ստեղծվել ածանցների օգնությամբ, արմատների միացմամբ և այլն։

2. Բառերը բաժանել ըստ բաղադրիչների. տարբերակել արմատը/ները և ածանցը/ները, ինչպես նաև ցույց տալ տրված 3-4 բառի բառակազմական մասնիկները (օրինակ՝ ան-կարգ/ան-ածանց, կարգ-արմատ/, առևտուր /առ-արմատ, տուր-արմատ, և-բառակազմական մասնիկ/, բառատետր/բառ-արմատ-ա-հոդակապ, տետր-արմատ)։

3. Տարբերակել շատ հայտնի, տարածված փոխառություններն ու ներքին միջոցներով կազմված բառերը ընդհանուր գծերով՝ բերելով յուրաքանչյուր տեսակից 3-4 օրինակ (փոխառություններ՝ պլան, ֆիզիկա, ավտոբուս,մետրո և այլն, ներքին միջոցներով ստեղծված բառեր՝ հացթուխ, կայք, ջրհոր, շենք և այլն)։

4. Տարբերակել հայերենի բառակազմական եղանակները՝ ածանցում, բառաբարդում և հապավում՝ նշելով հիմնական առանձնահատկությունները։

Դաս 11-12. Ածանցումը՝ որպես բառակազմության եղանակ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է ածանցումը։

2. Որո՞նք են ածանցների տեսակներն ըստ խոսքի մասերի կազմման՝ գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ, բայակերտ։

3. Որո՞նք են ածանցների տեսակներն ըստ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի՝ նախածանցներ և վերջածանցներ։

4. Որո՞նք են հայերենի առավել գործածական նախածանցները։

5. Հայերենում ո՞ր վերջածանցներն են առավել կիրառելի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Ածանցումը բառակազմական տարածված եղանակներից է, երբ բառահիմքին ավելանում են ածանցներ, և կազմվում են նոր բառեր։

2.Տարբեր ածանցներով հիմնականում կազմվում են գոյականներ (անակ- ժամանակ, անք- հարգանք, իք- կարծիք, ություն- խաղաղություն), ածականներ (ան- անտուն, տ- տգեղ, կան- լացկան), մակբայներ (որեն- մեղմորեն, ովին- լիովին), բայեր (ել- երգել, ալ- խաղալ)։

3. Ածանցների տեսակներն ըստ հիմքի նկատմամբ գրված դիրքի՝ նախածանցներ և վերջածանցներ։

4. Հայերենի առավել կիրառելի նախածանցները (օրինակ՝ *ան, ապ, դժ, տ, չ, հակ, նախ և այլն*)։

5. Հայերենի առավել կիրառելի վերջածանցները (օրինակ՝ *ան, ական, ային, ություն* և այլն)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել ածանցումը բառաբարդման մյուս տեսակներից։

2. Տրված ածանցներով կազմել 3-4 գոյական (իչ- գրիչ, անոց- հիվանդանոց, իք- կարծիք, ություն- խաղաղություն), 3-4 ածական (դժ-դժբախտ, տ- տհաճ, ական- ֆիզիկական), 2-3 մակբայ (որեն- քնքշորեն, ովին- հիմնովին, դաժան-աբար), 3-4 բայ (ել- սիրել, ալ- կարդալ, ներ-ել)։

3. Կազմել 3-4 նախածանցավոր (օրինակ՝ ան- անբախտ, դժ- դժգոհ, չ- չկամ, հակ- հականիշ, ենթ- ենթամաս) և 3-4 վերջածանցավոր բառեր (օրինակ՝ ակ- տնակ, ային- տնային, արան- գործարան, եղեն- բանջարեղեն)։

4. Տրված բառերում առանձնացնել առավել տարածված նախածանցները(օրինակ՝ *ան*-տուն, *տ*-հաճ, *դժ*-գույն, *համ*-երկրացի)։

5. Տրված բառերում առանձնացնել առավել տարածված վերջածանցները(պատմ-*ություն*, տնա-*ակ*, վան-*ական*, հիվանդ-*անոց*)։

Դաս 13-14. Բառաբարդումը՝ որպես բառակազմության եղանակ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է բառաբարդումը (բարդ բառեր կազմելը)։

2. Որո՞նք են բարդ բառերի տեսակները։

3. Ինչպե՞ս են կազմվում համադրական բարդությունները (հոդակապով, անհոդակապ)

4. Բառաբարդման ժամանակ հնչյունափոխության ի՞նչ դեպքեր են հանդիպում։

5. Ինչպե՞ս են գրվում համադրական բարդությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Արմատների միացումով նոր՝ բարդ բառեր կազմել։

2. Համադրական (բաղադրիչները միասին, օրինակ՝ ծաղկաման, լուսամուտ) և վերլուծական (բաղադրիչները անջատ, օրինակ՝ վեր կենալ, մեծ-մեծ) բարդությունները։

3. Համադրական բարդությունների կազմման եղանակները՝ հոդակապով, առանց հոդակապի։

4. Բառաբարդման ժամանակ տեղի ունեցող հնչյունափոխության պարզ դեպքերը։

5. Առավել տարածված համադրական բարդությունների գրությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված արմատների միացումով բարդ բառեր կազմել (օրինակ՝ հաց-թուխ, հոր-եղբայր, մայր-ա-քաղաք)։

2. Տարբերակել համադրական և վերլուծական բարդությունները՝ նշելով բաղադրիչների միասին կամ անջատ գրվելը։

3. Կազմել 3-4 հոդակապով և 3-4 անհոդակապ բարդություններ և նշել տարբերությունները։

4. Մատնացույց անել բառաբարդման ժամանակ տեղի ունեցող հնչյունափոոխությունը (օրինակ՝ սեզ- սիզախոտ (ե-ի), լույս- լուսանկար (ույ- ու), մայր- մորեղբայր (այ-ո)։

5. Ճիշտ գրել առավել տարածված համադրական բարդությունները, այսինքն՝ բաղադրիչները գրել միասին (օրինակ՝ հացթուխ, ջրմուղ, մայրաքաղաք, սարահարթ և այլն)։

Դաս 15. Կրկնությունը՝ որպես բառակազմության եղանակ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչպե՞ս են կազմվում հարադրական (վերլուծական) բարդությունները։

2. Ինչպե՞ս են կազմվում կրկնավոր բարդությունները։

3. Հիմնականում ի՞նչ խոսքի մասեր են կազմվում բառի կրկնությամբ։

4. Ինչպե՞ս են գրվում կրկնավոր բարդությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Հարադրական բարդությունները գրությամբ չեն միանում, բայց միասնաբար մեկ բառի իմաստ են արտահայտում։

2. Կրկնավոր բարդությունների կազմման եղանակները՝ արմատի ամբողջական կրկնությամբ, արմատներից մեկի հնչյունափոխությամբ։

3. Արմատի կրկնությամբ հիմնականում կազմվում են ածականներ, մակբայներ, թվականներ։

4. Առավել հայտնի կրկնավոր բարդությունների գրությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել կրկնավոր բարդությունները՝ հենվելով ուղղագրության վրա։

2. Տրված արմատներից կազմել կրկնավոր բարդություններ՝ անհրաժեշտության դեպքում հնչյունափոխելով արմատներից մեկը (օրինակ՝ մեծ-մեծ, արագ-արագ, մանր-մունր, պարապ-սարապ)։

3. Կրկնավոր բարդությունները կիրառել նախադասությունների մեջ որպես ածականներ, մակբայներ, թվականներ՝ կազմելով յուրաքանչյուրից 1-ական նախադասություն։

4. Ճիշտ գրել առավել տարածված կրկնավոր բարդությունները (օրինակ՝ արագ-արագ, ակաս-պակաս, ճեփ-ճերմակ)։

Դաս 16. Հարադրումը՝ որպես բառակազմության եղանակ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Բառակազմության ո՞ր եղանակն է կոչվում հարադրում։

2. Հարադրության ի՞նչ տեսակներ կան։

3. Ինչպե՞ս են գրվում առավել տարածված հարադրությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
.

1. Գրությամբ չմիացող, բայց միասնաբար մեկ բառի իմաստ արտահայտող բառերի կազմությունը։

2. Հարադրությունների տեսակները՝ անվանական և բայական, ընդհանուր գծերով։

3. Առավել կիրառելի հարադրությունների ուղղագրությունը և կիրառությունը խոսքում (օրինակ՝ հեռու-մոտիկ, գիշեր-ցերեկ, հին- նոր, ձեռք բերել, դուրս բերել, վեր կենալ)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել հարադրությունները՝ նշելով բաղադրիչների առանձին գրվելը, բայց միասնաբար մեկ իմաստ արտահայտելը։

2. Տարբերակել անվանական և բայական հարադրությունները՝ ելնելով այն ընդհանուր բնորոշումից, որ բայական հարադրությունների կազմում պարտադիր բայ կա, օրինակ՝ երգել-պարել, ձեռք բերել, իսկ անվանական հարադրությունները կազմվում են այլ խոսքի մասերից՝ օրինակ՝ ամառ-ձմեռ, հին-նոր, մեկ-երկու, այստեղ-այնտեղ՝ բերելով յուրաքանչյուր տեսակից 2-ական օրինակ։

3. Ճիշտ գրել և կիրառել առավել տարածված հարադրությունները (օրինակ՝ դուրս բերել, գլուխ բերել, վեց-յոթ, տուն-տեղ, աղմուկ-աղաղակ) և դրանցով կազմել 2-3 պարզ նախադասություն (օրինակ՝ Հայրը գիշեր-ցերեկ աշխատում էր։ Երեխան ցույց տվեց իր կատարած աշխատանքը)

Դաս 17. Հապավումը՝ որպես բառակազմության եղանակ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է հապավումը։

2. Հապավման ի՞նչ տեսակներ կան հայերենում։

3. Ինչպե՞ս են գրվում հապավումները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Հապավումը բառերի կրճատ գրության ճանապարհով առաջացած բարդություններ են։

2. Հապավումների տեսակները՝ ***տառային, վանկային(բառամասային), խառը***։

3. Հապավումների ուղղագրությունը՝ նշելով, որ հապավումների բաղադրիչները գրվում են միասին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նկարագրել հապավումները՝ նշելով, որ դրանք կրճատված բաղադրիչների միացմամբ են առաջանում։

2. Թվարկել հապավումների տեսակները՝ տառային, վանկային (բառամասային), խառը, և բերել յուրաքանչյուր տեսակից 2-ական օրինակ (ԱԺ, ՊՆ, դասվար, զինղեկ, ժողգործիքներ, բուժքույր)։

3. Ճիշտ գրել հապավումները. տառային հապավումները՝ մեծատառերով և միասին, օրինակ՝ ՀՀ, ՄԱԿ, ԵՊՀ, վանկային հապավումները՝ միասին, օրինակ՝ ուսմասվար, զինկոմ, դասղեկ, խառը հապավումները՝ ևս միասին՝ շինհրապարակ, տեխսպասարկում, Սևանհէկ։

Դաս 18. Բառարանագրություն. Բառարանների տեսակները Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են բառարանները։

2. Ինչի՞համար են ստեղծվում բառարանները։

3. Ի՞նչ խմբերի են բաժանվում բառարանները։

4. Ի՞նչ են հանրագիտարանները։

5. Ինչի՞ համար են նախատեսված բանասիրական կամ լեզվաբանական բառարանները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա
.

1. Բառարանները որոշակի տեղեկություններ պարունակող գրքեր են։

2. Բառարանների ստեղծման նպատակը (անհրաժեշտ տեղեկության հակիրճ մատուցում, կոնկրետ բառի նկարագրություն)։

3. Բառարանների տեսակները՝ հանրագիտական և բանասիրական (լեզվաբանական)։

4. Հանրագիտարանները գիտական և գիտահանրամատչելի տեղեկություններ ամփոփող բառարանի տեսակ են։

5. Բանասիրական կամ լեզվաբանական բառարանների նշանակությունը (պարունակում են բառերի բացատրություններ, բառերի՝ տարբեր լեզուներով թարգմանություններ և այլն)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել բառարաններն այլ գրքերից։

2. Մեկնաբանել բառարանների ստեղծման անհրաժեշտությունը (անհրաժեշտ տեղեկության հակիրճ մատուցում, կոնկրետ բառի նկարագրություն, տարբեր լեզուներով թարգմանություն)։

3. Ներկայացնել և տարբերակել բառարանների տեսակները՝ նշելով, որ հանրագիտարանը պարունակում է անհրաժեշտ գիտելիքներ կյանքի տարբեր ոլորտների մասին, իսկ լեզվաբանական բառարանը ներկայացնում են բառերի բացատրությունները, թարգմանությունները տարբեր լեզուներով և այլն։

4. Նկարագրել և օգտվել հանրագիտարաններից՝ նշելով, որ դրանք պարունակում են անհրաժեշտ գիտելիքներ կյանքի տարբեր բնագավառների մասին։

5.Ըստ անհրաժեշտության կիրառել բանասիրական կամ լեզվաբանական բառարաններ։

Դաս 19-20. Բառարանների կառուցվածքը և նրանցից օգտվելու կանոնները: Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են գլխաբառերը:

2. Ինչպե՞ս են կառուցված բառարանները:

3. Որո՞նք են բառարաններ կազմելու երկու հիմնական եղանակները:

4. Ինչպե՞ս պետք է օգտվել բառարաններից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Գլխաբառերը բառարանների բառացանկը կազմող բառերն են:

2. Բառարանների կառուցվածքը:

3. Բառարանների կազմման հիմնական եղանակները՝

- խիստ այբբենական կարգով բառերի դասավորում,
- բառերի թեմատիկ դասավորում:

4. Բառարաններից օգտվելու հիմնական սկզբունքները. առաջնորդվել գլխաբառի այբբենական դասավորվածությամբ կամ անհրաժեշտ թեման փնտրելով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բառարաններում ցույց տալ գլխաբառերը:

2. Նկարագրել բառարանների կառուցվածքը (գլխաբառ, այնուհետև բացատրություն, թարգմանություն, հոմանիշ բառեր և այլն):

3. Նկարագրել բառարանների կազմման հիմնական եղանակները՝ խիստ այբբենական կարգով բառերի դասավորում և բառերի թեմատիկ դասավորում:

4. Ըստ անհրաժեշտության օգտվել տարբեր տեսակի բառարաններից՝ հանրագիտարաններից, բացատրական և թարգմանական:

Դաս 1. Տեքստի կառուցվածքը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է տեքստը։

2. Ի՞նչ կառուցվածք ունի տեքստը։

3. Որո՞նք են տեքստի սկզբնամասը, հիմնամասը և ավարտամասը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Տեքստը ամբողջական միավոր է՝ կազմված նախադասությունից կամ նախադասություններից։

2. Տեքստն ունի որոշակի մասեր, որոնց ճիշտ հերթականությունը և կապերը օգնում են տեքստի իմաստի ճիշտ ընկալմանը։

3. Տեքստը կազմված է սկզբնամասից, հիմնամասից և ավարտամասից.

- Սկզբնամասը ներկայացնում է ասելիքի նպատակը, խնդիրները և այլն։
- Հիմնամասը ներկայացնում է հեղինակի բուն ասելիքը։
- Ավարտամասը ամփոփում է ասելիքը, կատարվում է եզրակացություն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ցույց տալ տեքստը, տրված գրավոր օրինակների միջից առանձնացնել տեքստը։

2. Փոքր տեքստերում ցուց տալ նրա մասերը, ըստ անհրաժեշտության վերականգնել տեքստի միավորների ճիշտ հաջորդականությունը և իմաստային կապերը։

3. Տրված տեքստում առանձնացնել սկզբնամասը, հիմնամասը, ավարտամասը, տրված հիմնամասին ավելացնել սկզբնամաս կամ ավարտամաս։

Դաս 2. Վերնագիր և բնաբան Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է վերնագիրը։

2. Վերնագրի ի՞նչ տեսակներ կան։

3. Ի՞նչ է բնաբանը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Գրավոր տեքստերը հիմնականում ունենում են վերնագրեր, որ տվյալ տեքստերի հիմնական անունն են։
2.

- Վերնագրեր կան, որոնք տեքստի ընդհանուր բովանդակության անվանումն են։
- Վերնագրեր կան (գեղարվեստական տեքստերի), որոնք ավելի հուզական և խորհրդանշական են լինում։

3. Բնաբանը լրացնում է վերնագրին, բնութագրում է տեքստի բովանդակությունը։ Գրվում է վերնագրից հետո՝ աջ հատվածում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բերել տեքստերի տարբեր վերնագրերի օրինակներ. վերնագրել տրված տեքստը, փոխել տրված տեքստի վերնագիրը։

2. Բերել տեքստի օրինակներ, որոնց վերնագիրը նրա բուն բովանդակությունն է արտահայտում, և տեքստեր, որոնց վերնագիրը ուղղակիորեն կապ չունի բովանդակության հետ։

3. Ցույց տալ տրված տեքստի բնաբանը, մեկ այլ տեքստի ավելացնել բնաբան տրված առածներից։

Դաս 3. Առաջաբան, ներածություն և վերջաբան [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Տեքստի ո՞ր հատվածն է առաջաբանը կամ ներածությունը։

2. Ինչի՞ մասին է տեքստի առաջաբանը (ներածությունը)։

2. Տեքստի ո՞ր հատվածն է վերջաբանը։

3. Ու՞մ կողմից են գրվում տեքստի ներածությունը, հիմնամասը և եզրակացությունները, ինչպես նաև առաջաբանն ու վերջաբանը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Ծավալուն տեքստերում կարող են առանձնացվել սկզբնամասը և ավարտամասը՝ դառնալով առաջաբան(ներածություն) և վերջաբան։

2. Տեսքտի առաջաբանում(ներածություն) ներկայացվում է, թե ինչի մասին է լինելու տեքստի հիմնամասը, այն նախապատրաստում է ընթերցողին հիմնամասի ընթերցմանը։

3. Տեքստի ավարտամասը վերջաբանն է, որտեղ կատարվում են եզրակացություններ և ընդհանրացումներ։ Դրանք կարող են վերնագրվել։

4. Տեքստի ներածությունը, հիմնամասը և եզրակացությունները ստեղծում է հեղինակը, իսկ առաջաբանն ու վերջաբանը կարող է գրել նաև ուրիշ անձ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ծավալուն տեքստերում ցույց տալ առաջաբանը (ներածությունը) և վերջաբանը։ Ըստ անհրաժեշտության հիմնամասին ավելացնել հակիրճ առաջաբան կամ վերջաբան։

2. Ծավալուն տեքստերում ցույց տալ առաջաբանը(ներածությունը)։ Տրված տեքստին ավելացնել 1-2 նախադասությունից բաղկացած առաջաբան։ Տրված առաջաբանը կարդալով՝ նկարագրել, թե ինչի մասին է լինելու հիմնամասը։

3. Տրված տեքստում առանձնացնել վերջաբանը, ավելացնել 1-2 նախադասությունից բաղկացած եզրակացություն, վերնագրել։

4. Տրված տեքստում տարբերակել ներածությունը առաջաբանից, եզրակացությունը՝ վերջաբանից, հիմնավորել պատասխանը։

Դաս 4.Պարբերություն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է պարբերությունը։ Ինչի՞ց է այն բաղկացած։

2. Ինչպե՞ս են պարբերությունները առանձնանում բանավոր և գրավոր խոսքերում։

3. Ի՞նչ սկզբունքներով են պարբերության մեջ միավորվում նախադասությունները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Տեքստի կազմում առանձնացվում են պարբերությունները, որոնք նախադասություն կամ նախադասությունների կապակցություն են, ունեն իմաստային որոշակի ինքնուրույնություն և տեքստի բաղադրիչ նվազագույն միավորն են։

2. Բանավոր տեքստում պարբերությունները առանձնանում են արտասանական դադարով, իսկ գրավոր տեքստերում նոր պարբերությունը գրվում է նոր տողից։

3. Պարբերության մեջ նախադասությունները հիմնականում միավորվում են՝ ելնելով իմաստային ամբողջականությունից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ցույց տալ տրված տեքստի պարբերությունները։ Տրված տեքստում առանձնացնել պարբերությունները։ Տեքստի վերջում ավելացնել մեկ պարբերություն՝ բաղկացած 1-2 նախադասությունից։

2. Կարդալ փոքրածավալ տեքստը համապատասխան առոգանությամբ, կարդալիս հնչերանգով առանձնացնել յուրաքանչյուր պարբերություն: Գրավոր խոսքում պահպանել նոր պարբերությունները: Գրել փոքրածավալ թելադրություն՝ նոր տողից գրելով պարբերությունները:

3. Տեքստում ցույց տալ յուրաքանչյուր պարբերության իմաստային միասնությունը՝ նշելով այն բառերը/բառակապակցությունները, որոնք ապահովում են այն: Ավելացնել տեքստում նոր պարբերություններ՝ կիրառելով այդպիսի բառեր/բառակապակցություններ, օրինակ՝ *այս, այդ, ընդհակառակը, վերջիվերջո, հետևաբար* և այլն:

Դաս 5. Ծանոթագրություններ, ցանկեր, հավելվածներ, ամփոփումներ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ են ծանոթագրությունները և հավելվածները:

2. Ի՞նչ են ցանկերը, ամփոփումները:

3. Ինչպե՞ս են ներկայացվում ծանոթագրությունները, ցանկերը, հավելվածները, ամփոփումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. *Ծանոթագրությունները* պարունակում են տեքստի վերաբերյալ տարբեր տեղեկություններ, բացատրություններ, աղբյուրներ և այլն:

Ծանոթագրություններ հիմնականում ունենում են գիտական տեքստերը:

Հավելվածները պարունակում են հավելյալ տեղեկություններ՝ օրինակ՝ վիճակագրական աղյուսակներ, քարտեզներ և այլն:

2. *Ցանկերը* կցվում են գրավոր տեքստերին: Ցանկի տարածված տեսակ են *բովանդակությունը, օգտագործված գրականությունը* և այլն: *Ամփոփումները* ներկայացվում են գիտական տեքստերին կից, տեքստի համառոտ բովանդակությունն են 1-2 օտար լեզուներով:

3.Ծանոթագրությունները, ցանկերը, հավելվածները, ամփոփումները ներկայացվում են տարբեր ձևերով՝ նույն էջի տողատակում, տեքստի վերջում, տեքստերին կից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տեքստում ցույց տալ ծանոթագրությունները, հավելվածները: Տեքստի նշված 2 բառերի/բառակապակցությունների վերաբերյալ ավելացնել ծանոթագրություններ, կցել մեկ հավելված նշված բառի/բառակապակցության վերաբերյալ, օրինակ՝ բացատրությունը կամ համապատասխան քարտեզը:

2. Տեքստում ցույց տալ ցանկը/ցանկերը, ամփոփումը/ամփոփումները: Ըստ անհրաժեշտության կազմել տեքստի բովանդակությունը: Գրել 2-3 նախադասությունից բաղկացած ամփոփում:

3. Տեքստում ցույց տալ ծանոթագրությունների, ցանկերի, հավելվածների, ամփոփումների ներկայացման տարբերությունները: Տեքստի վերջում ավելացնել բովանդակությունը, ամփոփումը, օգտագործված գրականությունից 2-3 վերնագիր:

Դաս 6-7. Տեղեկատվական ժանրեր: Ակնարկ: Թղթակցություն: Ռեպորտաժ: Հարցազրույց

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է տեղեկատվությունը:

2. Ի՞նչ է արտացոլում ակնարկը:

3. Ի՞նչ է թղթակցությունը:

4. Ի՞նչ է ռեպորտաժը:

5. Ի՞նչ է հարցազրույցը, և ինչպե՞ս վարել այն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Տեղեկատվությունը երկու և ավելի անձանց միջև տեղեկությունների փոխանցումն է: Տեղեկատվության փոխանցումը կատարվում է գրավոր կամ բանավոր ճանապարհով:

2. Ակնարկը իրականությունը պատկերում է կոնկրետ փաստերի միջոցով, սակայն հեղինակը այն ավելի գրավիչ դարձնելու համար կարող է օգտագործել գեղարվեստական հնարներ։

3.Թղթակցությունը դեպքերի և փաստերի ոչ ծավալուն շարադրանքն է, որը պարունակում է նաև հեղինակի կարծիքը։

4. Ռեպորտաժը զուտ տեղեկատվություն պարունակող նյութ է, որն ամփոփ ներկայացնում է որևէ իրադարձություն կամ դեպք։

5. Հարցազրույցը լրագրողի վարած զրույցն է անձի կամ անձանց հետ. այն վարելու համար անհրաժեշտ է լավ տիրապետել քննարկվող նյութին, ճիշտ ձևակերպել հարցերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նույն դեպքի, հանձնարարված նյութի վերաբերյալ կազմել ոչ ծավալուն (2-3 նախադասություն) գրավոր և բանավոր տեղեկույթ։

2. Տրված տեքստերից առանձնացնել ակնարկը, նշել հիմնական հատկանիշները (հեղինակը ականատեսն է, ներկայացնում է իրական փաստեր, գեղարվեստական մոտեցում է ցույց տալիս և այլն)։

3. Բերել թղթակցության օրինակներ տարբեր լրատվամիջոցներից՝ հեռուսատատեսություն, ռադիո, համացանց և այլն։ Գրել 3-4 նախադասությունից բաղկացած թղթակցություն դպրոցական առօրյայից։

4. Բերել ռեպորտաժի օրինակներ տարբեր լրատվամիջոցներից՝ հեռուստատեսություն, ռադիո, համացանց և այլն։ Գրել 3-4 նախադասությունից բաղկացած ռեպորտաժ դպրոցական որևէ իրադարձության մասին։

5. Վարել հարցազրույց դասընկերոջ, ամենասիրելի գրական հերոսի հետ՝ նախօրոք պատրաստելով 3-4 հարց։ Որոշել կազմած հարցերի տեսակը/բնույթը։

Դաս 8. Գործնական գրություններ: Դիմում, ինքնակենսագրություն [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչի՞ համար են անհրաժեշտ գործնական գրությունները:

2. Գործնական գրության ի՞նչ տեսակ է դիմումը:

3. Ի՞նչ կառուցվածք ունի դիմումը:

4. Ի՞նչ է ինքնակենսագրությունը, ի՞նչ կառուցվածք ունի ինքնակենսագրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Գործնական գրություններն անհրաժեշտ են պաշտոնական շփումների, պաշտոնատար անձանց հետ գործնական հարաբերություններ կարգավորելու համար։

2. Դիմումը պաշտոնատար անձանց դիմելու գրավոր փաստաթուղթ է, որտեղ շարադրվում են զանազան խնդրանքներ, առաջ եկած խնդիրներ, որոնց լուծմանն էլ ուղղված է գրության այս տեսակը։

3.Դիմումը ունի որոշակի ձև. վերևի աջ հատվածում գրվում է՝ ում է ուղղված այն, ով է հեղինակը՝ դիմողը, ներքևում շարադրվում է բուն խնդրանքը։ Վերջում գրվում են դիմողի անունը և ամսաթիվը, դրվում է ստորագրությունը։

4. Ինքնակենսագրությունը մարդու կյանքի առավել կարևոր դեպքերի, դրանց կատարման ժամաննակահատվածի վերաբերյալ փաստաթուղթ է, որտեղ դեպքերն ու իրադարձությունները շարադրվում են հաջորդականությամբ, առանց ավելորդ մանրամասների։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել գործնական գրությունները, նշել, թե որ դեպքում որ գործնական գրությունն է անհրաժեշտ։

2. Տարբերակել դիմումը այլ փաստաթղթերից, նշել հիմնական առանձնահատկությունները։

3. Ըստ անհրաժեշտության կազմել դիմում՝ պահպանելով գրության մշակված ձևը, հակիրճ և հասկանալի ձևակերպել առաջ քաշած խնդիրը և դրանից բխող խնդրանքը։ Գրել դիմում դպրոցի տնօրենին ամառային մարզական միջոցառումներ կազմակերպելու կամ արշավ գնալու խնդրանքով։

4. Կազմել սեփական ինքնակենսագրությունը՝ ներառելով 5-6 կարևոր դրվագ։

Դաս 9. Գործնական գրություններ։ Պաշտոնական նամակ, բացատրագիր [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ե՞րբ և ո՞ր դեպքում է գրվում պաշտոնական նամակ։

2. Ի՞նչ կառուցվածք ունի պաշտոնական նամակը։

3. Ի՞նչ է բացատրագիրը։ Ո՞ր դեպքում են պահանջում գրել բացատրագիր։

4. Ի՞նչ կառուցվածք ունի բացատրագիրը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1. Պաշտոնական նամակ գրում են պաշտոնատար անձինք՝ գործին առնչվող լուրեր, տեղեկություններ, առաջարկներ, շնորհավորանքներ և նմանատիպ բովանդակության տեքստեր իրար փոխանցելու համար։

2. Պաշտոնական նամակն ունի գործնական բնույթ, այդ պատճառով ունի որոշակի կառուցվածք՝ սովորաբար վերևում նշվում են ուղարկող կազմակերպության անվանումը, հասցեն, նամակը գրելու ամսաթիվը, հետո շարադրվում է բուն բովանդակությունը, վերջում գրվում է ուղարկողի անուն-ազգանունը։

3.Բացատրագիր գրվում է ուսումնական կամ աշխատանքային գործունեության ընթացքում որևէ խախտում կատարելու դրդապատճառները բացատրելու, մեկնաբանելու համար։ Բացատրագիրը սովորաբար գրվում է վերադասի պահանջով, բայց կարող է գրվել նաև սեփական նախաձեռնությամբ։

4. Բացատրագրի սկզբում նշվում է՝ ինչի վերաբերյալ է գրվում այն, հետո շարադրվում է բուն տեքստը, վերջում նշվում են գրողի անուն-ազգանունը, զբաղեցրած պաշտոնը և ամսաթիվը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել պաշտոնական նամակը, բացատրել պաշտոնական նամակ գրելու անհրաժեշտությունը պաշտոնական գրագրության մեջ։

2. Ուսուցչի հանձնարարությամբ շարադրել ոչ ծավալուն պաշտոնական նամակ՝ ուղղված դպրոցի տնօրենին՝ պահպանելով նամակ գրելու հիմնական կանոնները։

3. Մեկնաբանել, թե երբ է գրվում բացատրագիր, նշել, որ բացատրագիրը գրվում է հիմնականում վերադասի պահանջով, բայց խախտում թույլ տված անձը իր սեփական նախաձեռնությամբ ևս կարող է գրել բացատրագիր։

3. Գրել բացատրագիր դասերից ուշանալու կամ դպրոցում կազմակերպված շաբաթօրյակին չմասնակցելու մասին՝ նշելով խախտումը կատարելու 1-2 դրդապատճառ։

Դաս 10. Գործնական գրություններ: Բնութագիր, տեղեկանք [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1. Ի՞նչ է բնութագիրը:

2. Ո՞ւմ կողմից է տրվում տեղեկանքը:

3. Ինչի՞ համար է պետք տեղեկանքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

.

1.Բնութագիրը գրություն է, որով ղեկավարը ներկայացնում է իր ենթակայությամբ սովորողի կամ աշխատողի արժանիքները, մասնագիտական կարողությունները, բնավորության գծերը:

2. Տեղեկանքը տրվում է պաշտոնատար անձանց կողմից:

3. Տեղեկանքը տրվում է որևէ փաստ, տեղեկություն հաստատելու համար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1 Ներկայացնել, որ բնութագիրը տրվում է ղեկավարի կողմից, որտեղ նշված են սովորողի արժանիքներն ու կարողությունները, բնավորության գծերը:

2. Նշել, որ տեղեկանքը տրվում է պաշտոնատար անձանց կողմից ըստ պահանջի:

3. Բացատրել, որ տեղեկանքը տրվում է որևէ փաստ, տեղեկություն հաստատելու համար:

Դաս 11. Գործնական գրություններ. Արձանագրություն, քաղվածք [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1. Ի՞նչ է արձանագրությունը:

2. Ի՞նչ է քաղվածքը:

3. Ինչի՞ համար է քաղվածքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա .

1. Տարբեր կազմակերպություններում աշխատանքային գործունեության նիստերի, ժողովների ժամանակ քննարկված հարցերը, խնդիրները, անելիքները արձանագրվում են, այսինքն՝ գրի են առնվում:

2. Քաղվածքը հատված է արձանագրությունից:

3. Ներկայացվում է ըստ անհրաժեշտության:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել, թե երբ և որտեղ է գրվում արձանագրությունը (աշխատանքային գործունեության նիստերի, ժողովների ժամանակ):

2. Բացատրել՝ քաղվածքը արձանագրության մի հատված է:

3. Նշել, որ քաղվածքը ներկայացվում է ըստ անհրաժեշտության: